


ՄԱՍ Ի I - Բ

Հարկաբյուջեային ցուցանիշներ կանխատեսումներ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի (պակասուրդի) և պարտքի մակարդակները ձևավորվել են ՀՀ կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջեային բիրախններին համահուն:

Ստորև ներկայացվում է 2007¹-2009 թվականների ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեի հիմնական ցուցանիշների՝ եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի ընդհանուր գումարների՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերության միտումները ներկայացնող գծապատկերը:

Գծապատկեր 2.3. ՀՀ 2007-2009 թվական բյուջեների հիմնական համադրելի ցուցանիշների հարաբերությունները՝ ՀՆԱ-ի նկատմամբ




¹ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2007թ ցուցանիշները բերված են 2008թ-ից հանրապետությունում ներդրվող ՊՖՎ (GFS) -2001 նոր դասակարգման համաձայն:

Եկամուտների կանխատեսումներ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կազմում, ինչպես և նախորդ տարիներին, գերազանցում մաս են զրայեցնում հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ակնկալվող մուտքերը:

Գծապատկեր 2.4. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ)



ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով սահմանվող ընդհանուր եկամուտների շուրջ 80.0 %-ը կանավորվեն հարկերի և պետական տուրքերի հաշվին: 2009 թվականին հարկերը և պետական տուրքերը նախատեսվում են 726.0 մլրդ դրամի չափով, որը գերազանցում է 2008 թվականի համար հաստատված (ներառյալ ճշգրտումները) համարելի մակարդակը 16.2 %-ով: Հարկային եկամուտների կանխատեսվող աճի հիմնական աղբյուրը տնտեսության շարունակվող ակտիվությունն է և ՀՀ կառավարության կողմից տնտեսության ստվերային հատվածի կրճատմանն ուղղված միջոցառումների շարունակականությունը:

Արկդ 1

2009-2011թթ Եկամտային քաղաքականությունը կիրականացվի ԱՀՌԾ և ՀՀ կառավարության գործունեության ծրագրով ամրագրված երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես:

- Առաջիկա տարիներին պետական եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացումը հարկաբյուջետային քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է: ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությունը կավելացվի տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով:
- Կառավարությունը հարկային եկամուտների ավելացման հիմնական նպատակին կհասնի հատկապես տնտեսության ստվերային հատվածի կրճատման հաշվին՝ բացառելով տնտեսվարող սուբյեկտների հանդեպ օրենքի պահանջներով չպայմանավորված վարչարարական ճնշումները,
- Կրաքրացվի հարկային վարչարարության արդյունավետությունը,
- Կիրականացվեն միջոցառումներ կուտակված գերավճարների և ապաքների մարման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք կառնվեն միջոցառումներ նոր գերավճարների և ապաքների առաջացումը թույլ չտալու համար,
- Պետական բյուջեի ծախսերն առավելապես ապահովված կլինեն ներքին ռեսուրսներով և կնվազի պետական ծախսերի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող բյուջետային եկամուտների՝ ըստ եկամուտների կանխատեսումները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի՝ եկամուտների կանխատեսմանը վերաբերվող մասում:

2009 թվականի ծախսերի մակարդակը և ծախսային գերակայությունները

Հաշվի առնելով կանխատեսվող եկամուտների մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկայացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը 2009 թվականի ծախսերի սահմանաբանակը սահմանել է 945.4 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները 2009 թվականի համար սահմանված են Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով, 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության գործունեության և ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ 2009-2011թթ միջնաժամկետ ծախսային ծրագրով: Վերը նշված փաստաթղթերի համաձայն՝ ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները (ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ):

(I) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, ներառյալ կենսաքողակային ապահովում), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում իրականացվող քաղաքականության արդյունավետության, նպատակառողկածության և հասցեականության մակարդակի բարձրացմանն ուղղված բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(II) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովում,

(III) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Սոորութերված այլուսակում ներկայացված են 2008, 2009 թթ ժամանակահատվածում պետական բյուջեից ծախսերի հիմնական ուղղություններին բաշխվող հատկացումների տեսակաբար կշիռներն (սոորութերով)` համապատասխան տարիների պետական բյուջեների ընդհանուր ծախսերի նկատմամբ:

Աղյուսակ 2. ՀՀ 2008-2009թթ պետական բյուջեից հիմնական ուղղություններին բաշխվող հատկացումների տեսակարար կշիռները (%)


| Ուղղությունները | 2008թ ըստ հաստատված բյուջեի | 2009թ նախագիծ |
|---|-----------------------------|---------------|
| 1. Սոցիալական-մշակութային ճյուղեր | 47.8 | 49.2 |
| 2. Պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր | 21.6 | 22.4 |
| 3. Տնտեսության ճյուղեր | 15.1 | 13.8 |
| 4. Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին | 2.6 | 3.0 |

Այս ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ հիմնական բաղադրիչների և մանրամասների ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրում:

Ոլորտների ֆինանսավորումը նվիրատուների կողմից

2009 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, բյուջետային մուտքերի ընդհանուր ծավալը ձևավորվելու է նաև բյուջետային որոշ ծախսերի ֆինանսավորման համար օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ արտաքին դոնորների կողմից պաշտոնական դրամաշնորհների և արտոնյալ վարկերի տեսքով Հայաստանի Հանրապետությանը հատկացվող աջակցությունը: Ստորև ներկայացված պատկերում արտացոլված են 2009 թվականի բյուջետային մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (տոկոսներով):

Գծապատկեր 2.5. ՀՀ 2009 պետական բյուջեի մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (%)



Այս հարցի վերաբերյալ տեղեկատվությունը և ըստ հիմնական բաղադրիչների և մանրամասների ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրում:

Դեֆիցիտի (պակասուրդի) և պարտքերի մակարդակը

Ինչպես արդեն վերը նշվեց, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով բյուջետային դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 1.0 %-ի չափով և կազմում է 40.0 մլրդ դրամ: 2009 թվականի բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում կգերակշռեն ներքին աղբյուրները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կկազմի մոտ 76.3%: Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը կազմում են պետական արժեքութերի իրացումից ստացվելիք մուտքերը՝ 25.0 մլրդ դրամ, ինչպես նաև 2009 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների՝ բյուջետային ելքերի ֆինանսավորմանն ուղղվող մասը՝ 7.6 մլրդ դրամ:

Դեռևս զգալի են արտաքին աղբյուրներից՝ միջազգային կազմակերպություններից (մեծամասմբ Համաշխարհային բանկից) և օտարերկրյա պետություններից ստացվելիք արտոնյալ վարկերի հաշվին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող միջոցները: ՀՀ պետական պարտքի 2007 թվականի արդյունքներով առկա և 2008-2009թթ կանխատեսվող ընդհանուր կառուցվածքը՝ ըստ գոյացման աղբյուրների և կանխատեսվող ծավալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2. 3 ՀՀ պետական պարտքը 2007-2009թթ (մլն ԱՄՆ դրամ)

| Ցուցանիշներ | 2007թ | 2008թ | 2009թ |
|----------------------------------|---------------|-------------------------|----------------------|
| | փաստացի | սպասողական ² | նախագիծ ³ |
| Պետական պարտք՝ ընդամենը | 1696.8 | 1986.0 | 2210.3 |
| %-ով ՀՀ Անկատմամբ | 18.4 | 17.6 | 16.1 |
| - Արտաքին պարտք | 1448.9 | 1678.5 | 1800.3 |
| %-ով ՀՀ Անկատմամբ | 15.7 | 14.9 | 13.1 |
| որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք | 167.1 | 161.4 | 142.7 |
| Ներքին պարտք | 247.8 | 307.5 | 410.0 |
| %-ով ՀՀ Անկատմամբ | 2.7 | 2.7 | 3.0 |

Ինչպես երևում է աղյուսակից, կանխատեսումների համաձայն 2008 թվականի տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշռող մասը (85%-ը) բաժին է ընկնում արտաքին պարտքին: Հարկ է նշել, որ արտաքին պարտքի ծրագրավորվող աճն էական ազդեցություն չի ունենա երկրի վճարունակության վրա, որովհետև մի շաբթ որակական ցուցանիշներ հիմնականում չեն փոփոխվի կամ կփոխվեն դրական ուղղությամբ: Մասնավորապես, կնվազեն արտաքին պարտք /ՀՀ և արտաքին պարտքի ներկա արժեք/ՀՀ հարաբերությունները:

Ժամկետանց պարտքեր

ՀՀ կառավարությունը, ինչպես և նախկինում, կարևորում է ժամկետանց բյուջետային պարտքերի առաջացնան երևույթի վերահսկումը, քանի որ դրանք ուղղակի վտանգ են ներկայացնում տնտեսության բնականոն կենսագործունեության համար: Բացի այդ, վերջիններս անվերահսկելիորեն առաջացնելով ՀՀ կառավարության լրացուցիչ պարտավորություններ, մեծացնում են ճնշումը առաջիկա

² 2008 թվականի համար ներքին պետական պարտքը հաշվարկվել է 1 ԱՄՆ դրամ=325.16 դրամ փոխարժեքով :

³ 2009 թվականի նախագծի համար ներքին պետական պարտքը հաշվարկվել է 1 ԱՄՆ դրամ=302.44 դրամ փոխարժեքով :

տարիների ՀՀ պետական բյուջեների վրա, դրանով իսկ սահմանափակելով պետության՝ առանց այդ էլ սուլ ֆինանսական հնարավորությունները ռազմավարական ծրագրերի իրականացման գործում: Դրա հետ մեկտեղ կիրականացվեն միջոցառումներ կուտակված հարկային գերավճարների մարման և այդ գծով նոր պարտքեր չկուտակելու ուղղությամբ:

Հարկաբյուջետային ռիսկերը

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի իրատեսության տեսանկյունից առանցքային նշանակություն ունի ծրագրային սցենարից հնարավոր իմանական շեղումների գնահատականը: Ընդ որում, այդ շեղումները հարկաբյուջետային շրջանակի վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այդուհանդերձ, առավել կարևոր են այն շեղումները, որոնք կարող են հանգեցնել բացասական հետևանքների և պահանջելու են համապատասխան վերանայումներ կատարել ծախսերի ծրագրերում: Այդ իմաստով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկ և ռիսկային համապատասխան գործոնների բացահայտումը և դրանց գնահատականները էապես կարող են որոշակիացնել նախագծում կատարվելիք հնարավոր ճշգրտումների շրջանակները:

Ռիսկերի աղբյուրները

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից բացասական շեղումների:

- (i) ներքին ռեսուրսների գծով,
- (ii) արտաքին օժանդակության գծով:

Ներքին ռեսուրսների մասով. 2009 թվականի բյուջետային ռեսուրսների փաթեթի համարում նախատեսվում է ապահովել հիմնականում հարկային եկամուտների աճի հաշվին: Վերջիններիս հավաքրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ հարկերի հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր ունի նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին քաղաքական դաշտում զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները:

Մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանություն. Մակրոտնտեսական շրջանակում կատարված կանխատեսումների և նախորդ տարիների փաստացի ցուցանիշների համեմատությունը թույլ է տալիս ենթադրելու, որ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների ծրագրման հիմքում դրված մակրոտնտեսական զարգացումները կրում են պահպանողական բնույթ և ռիսկային չեն:

Վարչարարական միջոցառումների իրականացում. Տնտեսության չհաշվառվող և չհարկվող ծավալների կրծատմանը միտված ՀՀ կառավարության կոնկրետ քայլերի իրականացումը էական ազ-

դեցություն կունենա տնտեսական դաշտում տնտեսվարողների իրավունքների հավասարության և նրանց միջև հարկային բեռի առավել արդարացի բաշխման գործընթացի վրա, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս կապակցությամբ հարկային եկամուտների մասով 2009 թվականին ռիսկի գործոնն առկա է և գնահատվում է 6.5 մլրդ դրամ: Այս դեպքում տնտեսության ստվերային հատվածի կրծատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է, որն ըստ նախորդ տարիների փորձի կարելի է համարել հուսալի:

Ներքին քաղաքական դաշտում գարգազումների և արտաքին գործոնների ազդեցություններ. Ռիսկը հնարավոր է ներքին քաղաքական լարվածության առաջացման կամ արտաքին գործոնների (արտաքին շուկաներում, ինչպես նաև ՀՀ սահմաններում իրավիճակի սրում) ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատքարացման դեպքում և այն գնահատման ենթարկել հնարավոր չէ:

Արտաքին օժանդակության մասով 2009 թվականին բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական տրանսֆերտների, այնպես էլ վարկերի հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհների մասով. Այդ միջոցների հատկացման հարցը կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու ՀՀ կառավարության կողմից տնտեսության բարեփոխումների բնագավառում որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով:

Վարկերի մասով ռիսկերը հիմնականում պայմանավորված են ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը ենթադրում է ծախսերի վերանայում կրծատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային եկամուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ իմք ընդունելով գերակայության սկզբունքը. այն է՝ առաջին հերթին կրծատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված ծախսերը, որոնք ունեն գերակայության ավելի ցածր աստիճան:

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (92.2%):

Աղյուսակ 2. 4. Արտաքին օժանդակությունն՝ ըստ բնույթի

| Ցուցանիշներ | Գումարը (մլրդ դրամներով) | Տեսակարար կշիռը արտաքին օժանդակության ընդհանուր գումարում (%) |
|--|-----------------------------|---|
| Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն | 6.6 | 7.8 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 6.6 | x |
| Վարկեր | 0. | x |
| Ծրագրային (նպատակային) օժանդակություն | 78.7 | 92.2 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 29.5 | x |
| Վարկեր | 49.2 | x |
| Ընդամենը արտաքին օժանդակություն | 85.3 | 100.0 |

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական տրանսֆերտների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին: Մասնավորապես, ծրագրային վարկերի կառուցվածքում գերակշռում են սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների ոլորտներում Հանաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող նպատակային ծրագրերը:

Փոխհատուցման հնարավորությունները

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի հարկաբյուջետային շրջանակի վրա կարող են դրական ազդեցություն ունենալ մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները: 2009 թվականի մակրոտնտեսական զարգացման սցենարի կանխատեսումները կատարվել են 2008 թվականին և նախատեսված դիմաց 2009 թվականի ընթացքում մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման համար՝ ստեղծելով արտաքին օժանդակության և հարկային վարչարարության գծով գնահատվող հնարավոր «կորուստների» փոխհատուցման իրական հիմքեր: